Սկզբնական մնացորդ	142.00	(136,784.00)
Ավելացում	93,407.00	136,926.00
Նվազեցում		
Վերջնական մնացորդ	93,549.00	142.00

Ծանոթագրություն 31.2. «Չբաշխված շահույթ»

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ ժամանակաշրջան
Սկզբնական մնացորդ	421 217	645 802
Ավելացում		
Նվազեցում	(121 760)	(224 585)
Վերջնական մնացորդ	299 457	421 217

Ծանոթագրություն 35. «Կապիտալի այլ տարրեր»

Ընկերությունը 2023թ. Սեպտեմբերի 30-ի դրությամբ հաշվեկշռում հաշվառվող կապիտալի այլ տարրեր չի ունեցել:

Ծանոթագրություն 36. «Գործարքներ կապակցված կողմերի հետ»

Կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս:

Ընկերության կապակցված կողմերն են՝ նրա մասնակիցները, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք :

Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմեր են համարվում՝

- ✓ Ընկերության ղեկավարները,
- ✓ Ընկերության կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձիք,
- ✓ առաջին և երկրորդ կետերում նշված անձանց հետ փոխկապակցված ֆիզիկական և իրավաբանական անձիք :

Ընկերությունը որևէ խմբի անդամ չէ :

Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը կապակցված կողմերի հետ չի իրականացրել այնպիսի գործարքներ, որոնց պայմանները և տոկոսադրույքները գործող շուկայական պայմաններից առավել բարենպաստ են համարվել:

Ներդրումային ընկերությունը իր գործունեության ընթացքում իրականացրել է գործարքներ կապակցված կողմերի հետ. տրվել են փոխառություններ, կատարվել են տարածքների վարձակալության վճարումներ: Նշված գործարքները իրականացվել են տվյալ պահին շուկայում գործող պայմաններից և տոկոսադրույքներից ելնելով:

Գործարքներ ղեկավար անձնակազմի հետ

«Հիմնական աշխատողներին տրվող աշխատավարձ» հոդվածում ներառված ղեկավար անձնակազմի ընդհանուր վարձատրությունը 2023թ սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է մոտ 25 000 հազար դրամ :

Ծանոթագրություն 37. «Ֆինանսական ռիսկերի վերաբերյալ նվազագույն բացահայտումներ»

Ընկերությունը կարևորում է ռիսկերի կառավարման գործընթացը, որի նպատակն է ֆինանսական կարուստների կրճատումը և իրականացվող գործառնությունների հուսալիության ապահովումը:

Ընկերության գործունեությունը առնչվում է հետևյալ ֆինանսական ռիսկերի հետ:

- ✓ վարկային (պարտքային) ռիսկ,
- ✓ շուկայական ռիսկ.
- ✓ գնային ռիսկ,
- ✓ տոկոսային ռիսկ,

37.1 Պարտքային ռիսկ

Վարկային (պարտքային) ռիսկը գործընկերոջ կողմից իր ստանձնած պարտավորությունները (այդ թվում թողարկած արժեթղթերի գծով) ժամանակին և լրիվությամբ չկատարելու ռիսկն է, որը գնահատվում է պարտքի և տոկոսային վճարումների ընդհանուր գումարով,

Վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում են Ընկերության ակտիվները, հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունները:

37.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկի վերլուծություն

Շուկայական ռիսկը Ընկերության կողմից շուկայական գների փոփոխության հետևանքով կարուստներ կրելու վտանգն է, որը կապված է տոկոսադրույքների նկատմամբ զգայուն ակտիվների ու պասիվների և կապիտալի գործիքների հետ :

Շուկայական ռիսկը իր մեջ ներառում է արտարժույթային, տոկոսադրույքների փոփոխման և գնային ռիսկերը :

Արտարժույթային ռիսկի կառավարումն իրականացվում է արտարժույթների փոխարժեքների փոփոխություններով պայմանավորված օգուտներ ստանալու (կորուստներ չկրելու) տեսանկյունից:

Արտարժույթային ռիսկի կառավարման գործընթացը ներառում է՝ արտարժույթային շուկայի ուսումնասիրման, արտարժույթային ռիսկի կանխատեսման, գնահատման՝ ռիսկի հնարավոր չափերի և հետևանքների որոշման, արտարժույթային ռիսկի հետ կապված կարուստների կանխարգելման և նվազեցման փուլերը: Արժույթային շուկայի վերլուծության գնահատականները Ընկերությունում արվում են հիմք ընդունելով տարբեր տեղեկատվական համակարգերով ստացված տեղեկատվությունը, միջազգային ինտերնետային կայքերի վերլուծական տեղեկատվությունները՝ կիրառելով վերլուծության երկու մեթոդ՝ ֆունդամենտալ և տեխնիկական: Ֆունդամենտալ վերլուծությունը ենթադրում է շուկայի վերլուծություն՝ տնտեսությունը բնութագրող տարբեր ցուցանիշների դինամիկայի, ինչպես նաև քաղաքական իրադարձությունների, օրենսդրական դաշտի փոփոխությունների հիման վրա: Կանխատեսումների իրականացման համար հիմք են հանդիսանում երկարաժամկետ հատվածում փոխարժեքի վրա ազդող երկրի տնտեսական պայմանները: Տեխնիկական վերլուծությունը ենթադրում է գների նախկին դինամիկայի հիման վրա գների ապագա փոփոխությունների կանխատեսումը: Ուսումնասիրվում են փոխարժեքների տատանման միտումները կամ տրենդները, վերլուծության են ենթարկվում փոխարժեքների տատանումների դրսևորումները :

37.3 Արտարժույթի ռիսկ

Արտարժույթային ռիսկը արժույթային փոխարժեքի անբարենպաստ փոփոխության ռիսկն է, որն իր մեջ ներառում է փոխարժեքների, դրանց տատանողականության փոփոխության, տարբեր փոխարժեքների միջև հարաբերակցության փոփոխության ռիսկերը:

Ակտիվները կամ պարտավորությունները պարունակում են արտարժույթային ռիսկ, երբ դրանց մեծությունները, դրանց գծով ստացվելիք կամ վնարվելիք գումարները դրամային արտահայտությամբ ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել արտարժույթի^a Հայաստանի Հանրապետության դրամի նկատմամբ փոխարժեքի փոփոխությամբ պայմանավորված:

Արտարժույթային ռիսկի կառավարումն իրականացվում է արտարժույթների փոխարժեքների փոփոխություններով պայմանավորված օգուտներ ստանալու (կորուստներ չկրելու) տեսանկյունից:

Արտարժույթային ռիսկի կառավարման գործընթացը ներառում է՝ արտարժույթային շուկայի ուսումնասիրման, արտարժույթային ռիսկի կանխատեսման, գնահատման՝ ռիսկի հնարավոր չափերի և հետևանքների որոշման, արտարժույթային ռիսկի հետ կապված կարուստների կանխարգելման և նվազեցման փուլերը : Արժույթային շուկայի վերլուծության գնահատականները Ընկերությունում արվում են հիմք ընդունելով տարբեր տեղեկատվական համակարգերով ստացված տեղեկատվությունը, միջազգային ինտերնետային կայքերի վերլուծական տեղեկատվությունները՝ կիրառելով վերլուծության երկու մեթոդ՝ ֆունդամենտալ և տեխնիկական: Ֆունդամենտալ վերլուծությունը ենթադրում է շուկայի վերլուծություն՝ տնտեսությունը բնութագրող տարբեր ցուցանիշների դինամիկայի, ինչպես նաև քաղաքական իրադարձությունների, օրենսդրական դաշտի փոփոխությունների հիման վրա: Կանխատեսումների իրականացման համար հիմք են հանդիսանում երկարաժամկետ հատվածում փոխարժեքի վրա ազդող երկրի տնտեսական պայմանները: Տեխնիկական վերլուծությունը ենթադրում է գների նախկին դինամիկայի հիման վրա գների ապագա փոփոխությունների կանխատեսումը: Ուսումնասիրվում են փոխարժեքների տատանման միտումները կամ տրենդները, վերլուծության են ենթարկվում փոխարժեքների տատանումների դրսևորումները :

Հաշվետու ժամանակաշրջան

	ՀՀ դրամ	I խմբի արտարժույթ	II խմբի արտարժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում				
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	11,108.00			
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	342,074.00			
Հաճախորդների նկատմամբ պահանջներ				

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	2,580,187.00			
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	4,742,738.00			
Այլ	36,086.00			
Ընդամենը ակտիվներ	7,712,193.00			
Պարտավորություններ				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	6,585,475.00			
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	342,074.00			
Այլ պարտավորություններ	4,138.00			
Ընդամենը պարտավորություններ	6,931,687.00			
Զուտ դիրք	780,506.00			

Նախորդ հաշվետու ժամանակաշրջան.

	ՀՀ դրամ	I խմբի արտարժույթ	II խմբի արտարժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում				
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	6,044.00			
Ծառայության կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	555,572.00			
Հաճախորդների նկատմամբ պահանջներ	1,358,845.00			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	1,773,030.00			
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	4,853,117.00			
Այլ	53,627.00			
Ընդամենը ակտիվներ	8,600,235.00			
Պարտավորություններ				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	5,754,041.00			
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	2,023,905.00			
Այլ պարտավորություններ	13,430.00			
Ընդամենը պարտավորություններ	7,791,376.00			
Զուտ դիրք	808,859.00			

37.4.Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի փոփոխությունն ուղղակիորեն ազդում է ներդրումային ընկերության տոկոսային ռիսկի, ակտիվների ու պարտավորությունների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: Այդ պատճառով, ակտիվների և պարտավորությունների տոկոսադրույքների վերանայման ժամկետայնության վերլուծությունը թույլ է տալիս ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին վերլուծել ներդրումային ընկերության տոկոսադրույքի ռիսկը և, հետևաբար, ակնկալվող օգուտները կամ վնասները:

Տոկոսային ռիսկը փոխառու կապիտալի շուկայում անբարենպաստ փոփոխությունների ռիսկն է, որը իր մեջ ներառում է տոկոսադրույքների փոփոխության, եկամտաբերության կորի տեսքի փոփոխության, տոկոսադրույքների տատանողականության փոփոխության, տարբեր տոկոսադրույքների միջև հարաբերակցության փոփոխության ռիսկերը:

Տոկոսադրույքի ռիսկը հաշվարկվում է որպես տոկոսադրույքի հատուկ ռիսկի և ընդհանուր ռիսկի հանրագումար, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով^a

$$S\Omega = S\Omega + S\Omega,$$

որտեղ՝

- ✓ $S\Omega$ - տոկոսադրույքի ռիսկն է,
- ✓ $S\Omega$ - տոկոսադրույքի հատուկ ռիսկն է,
- ✓ $S\Omega$ - տոկոսադրույքի ընդհանուր ռիսկն է:

Տոկոսադրույքի հատուկ և ընդհանուր ռիսկերը հաշվարկվում են առևտրական նպատակներով պահվող և վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերի նկատմամբ: Ընդ որում, պարտքային արժեթղթերը դիրքերի հաշվարկում ընդգրկվում են ընթացիկ շուկայական արժեքով:

Պարտքային արժեթղթերի դիրքը Ընկերության պարտքային արժեթղթերի (ներառյալ հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների հիմքում ընկած պարտքային արժեթղթերի) և որպես պարտավորություն հանդիսացող պարտքային արժեթղթերի (ներառյալ՝ հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների հիմքում ընկած պարտքային արժեթղթերի) մեծությունների տարբերությունն է: Պարտքային արժեթղթերի դիրքերը սահմանվում են.

ա. երկար, եթե տարբերությունը մեծ է գրոյից,

բ. կարճ, եթե տարբերությունը փոքր է գրոյից,

գ. փակ, եթե տարբերությունը հավասար է գրոյի:

Պարտքային արժեթղթերի համախառն դիրքը հաշվարկվում է որպես պարտքային արժեթղթերի երկար և կարճ դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումար:

Տոկոսադրույքի հատուկ ռիսկի հաշվարկման նպատակով պարտքային արժեթղթերի յուրաքանչյուր խմբի նկատմամբ իրականացվում է պարտքային արժեթղթերի դիրքերի հաշվարկ:

Դիրքերի հաշվարկից հետո հաշվարկվում է պարտքային արժեթղթերի համախառն դիրքը, որն էլ տոկոսադրույքի հատուկ ռիսկի մեծությունն է:

Համախառն դիրքի հաշվարկում պարտքային արժեթղթերը տարբերակված կշիռներով ընդգրկելու նպատակով դասակարգվում են հետևյալ դասերի:

Պարտքային արժեթղթերի դասերն են.

- պետական պարտքային արժեթղթեր՝ պետությունների/կառավարությունների, կենտրոնական բանկերի և տեղական կառավարման մարմինների պարտքային արժեթղթեր,
- հուսալի պարտքային արժեթղթեր: Հուսալի պարտքային արժեթղթերի թվին են դասվում միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված պարտքային արժեթղթերը, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների և օտարերկրյա բանկերի Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի պարտքային արժեթղթերը, օտարերկրյա բանկի կողմից թողարկված /ԲԲԲ-/Բաա3/ և ավելի բարձր վարկանիշ ունեցող պարտքային արժեթղթերը, օտարերկրյա ոչ բանկ կազմակերպության կողմից թողարկված /Ա-/Ա3/ և ավելի բարձր վարկանիշ ունեցող պարտքային արժեթղթերը, ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից 'Բ-' և ավելի բարձր վարկանիշ ստացած ոչ բանկ կազմակերպությունների պարտքային արժեթղթերը,
- այլ պարտքային արժեթղթեր, որոնք չեն դասվում պետական պարտքային և հուսալի պարտքային արժեթղթերի շարքին:

Հաշվետու ժամանակաշրջան

Հոդվածի անվանումը	մինչև 1 ամիս		1-ից մինչև 3 ամիս		1-ից մինչև 5 տարի		5 տարուց ավելի	
	իսրումն	իսբիրք մտտմն	իսրումն	իսբիրք մտտմն	իսրումն	իսբիրք մտտմն	իսրումն	իսբիրք մտտմն
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ, այդ թվում՝	11,108.00							
Վարկեր								
ավանդներ								
ռեպո համաձայնագրեր								
դրամական միջոցներ	11,108.00							
Հաճախորդների նկատմամբ պահանջներ, այդ թվում՝^ա	0.00							
վարկեր								
ռեպո համաձայնագրեր								
այլ					1,215,883.00		1,706,378.00	
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական Ակտիվներ					450,037.00		4,292,701.00	
Տեղաբաշխված այլ միջոցներ	36,086.00							
Ընդամենը	47,194.00	0.00	0.00	0.00	1,665,920.00	0.00	5,999,079.00	0.00
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ, այդ թվում՝								
վարկեր								
ռեպո համաձայնագրեր	6,585,475.00							
Ներգրաված այլ միջոցներ	342,074.00							
Այլ	4,138.00							
Ընդամենը	6,931,687.00	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00	0,00
Զուտ դիրք	6,884,493.00				1,665,920.00		5,999,079.00	

Նախորդ ժամանակաշրջան

Հոդվածի անվանումը	մինչև 1 ամիս		1-ից մինչև 3 ամիս		1-ից մինչև 5 տարի		5 տարուց ավելի	
	իսրումն	իսբիրք մտտմն	իսրումն	իսբիրք մտտմն	իսրումն	իսբիրք մտտմն	իսրումն	իսբիրք մտտմն

Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ, այդ թվում՝	6,044.00							
վարկեր								
ավանդներ								
ռեպո համաձայնագրեր								
դրամական միջոցներ	6,044.00							
Հաճախորդների նկատմամբ պահանջներ, այդ թվում՝	1,358,845.00							
վարկեր								
ռեպո համաձայնագրեր	1,358,845.00							
այլ								
Շահույթ կամ վնասի միջ. Չափվող և Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ			555,572.00		1,773,030.00			
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական Ակտիվներ							4,853,117.00	
Տեղաբաշխված այլ միջոցներ	53,627.00							
Ընդամենը	1,418,516.00	0.00	555,572.00	0.00	1,773,030.00	0.00	4,853,117.00	0.00
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ, այդ թվում՝								
վարկեր								
ռեպո համաձայնագրեր	5,754,041.00							
Ներգրավված այլ միջոցներ	2,023,905.00							
Այլ	13,430.00							
Ընդամենը	7,791,376.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
Զուտ դիրք	-6,372,860.00	0.00	555,572.00	0.00	1,773,030.00	0.00	4,853,117.00	0.00

Ներդրումային ընկերության կողմից ներկայացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ տոկոսաբեր/տոկոսակիր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար գործող միջին տոկոսադրույքները.

Հոդվածի անվանումը	Հաշվետու ժամանակաշրջանի տոկոսադրույքներ		Նախորդ հաշվետու ժամանակաշրջանի տոկոսադրույքներ	
	ՀՀ դրամ	Արտարժույթ	ՀՀ դրամ	Արտարժույթ
	%	%	%	%
Ակտիվներ				
Մնացորդներ ՀՀ ԿԲ-ում				
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ, այդ թվում ^ա -վարկեր -ռեպո համաձայնագրեր - սվոպ				
Հաճախորդների նկատմամբ պահանջներ	0		10.5	
Շահույթ կամ վնասի միջ. Չափվող և Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	10.8695		11.9939	
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	10.2134		8.5249	
Պարտավորություններ				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	10.85		10.2165	
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ				
Պարտավորություններ ներդրումային ընկերության կողմից թողարկված արժեթղթերի գծով				

37.5 Գնային ռիսկ

Շուկայական գների փոփոխությունը մեծապես ազդում է ֆինանսական գործիքների արժեքի վրա, ընդ որում, այդ փոփոխությունները կարող են պայմանավորված լինել ինչպես առանձին արժեթղթերին կամ նրանց թողարկողներին հատուկ գործոններով, այնպես էլ շուկայում շրջանառվող բոլոր արժեթղթերի վրա ազդող ընդհանուր գործոններով:

Գնային ռիսկը ֆոնդային շուկայում անբարենպաստ փոփոխությունների ռիսկն է, որն իր մեջ ներառում է արժեթղթերի գների փափախության, արժեթղթերի գների տատանողականության, տարբեր արժեթղթերի և ինդեքսների միջև գնային հարաբերակցության փոփոխության ռիսկերը:

Գնային ռիսկը հաշվարկվում է առևտրական նպատակներով պահվող և վաճառքի համար մատչելի կապիտալի գործիքների (բաժնային արժեթղթերի) նկատմամբ:

Կապիտալի գործիքների դիրքը, որպես ակտիվ հանդիսացող կապիտալի գործիքների (ներառյալ^ա հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների հիմքում ընկած կապիտալի գործիքների) և որպես պարտավորություն հանդիսացող կապիտալի գործիքների (ներառյալ^ա հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների հիմքում ընկած կապիտալի գործիքների) մեծությունների տարբերությունն է: Կապիտալի գործիքների դիրքերը սահմանվում են^ա

- ա. երկար, եթե տարբերությունը մեծ է գրոյից,
- բ. կարճ, եթե տարբերությունը փոքր է գրոյից,
- գ. փակ, եթե տարբերությունը հավասար է գրոյի:

Կապիտալի գործիքների համախառն դիրքը հաշվարկվում է որպես կապիտալի գործիքների տարբեր դիրքերի (երկար և կարճ) բացարձակ մեծությունների հանրագումար:

Կապիտալի գործիքների համախառն գուտ դիրքը հաշվարկվում է որպես կապիտալի գործիքների երկար դիրքերի հանրագումարի և կարճ դիրքերի հանրագումարի (բացարձակ մեծությամբ) միջև տարբերություն:

Կապիտալի գործիքները դիրքերի հաշվարկում ընդգրկվում են ընթացիկ շուկայական արժեքով:

37.6. Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը Ընկերության կողմից ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման ունակության մասնակի կամ ամբողջությամբ կորստի վտանգն է :

Իրացվելիության ռիսկերը ի հայտ են գալիս անբավարար իրացվելիության կամ շուկայականից առավել բարձր արժեքով ձեռք բերված արդյունքում, իֆջը արտահայտվում է այնուհետև Ընկերության եկամուտներում և ծախսերում: Առաջանում է այն ժամանակ, երբ Ընկերությունը չի կարողանում վերահսկել պասիվների կրճատումը և ապահովել ակտիվների աճ : Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ ընկերության իրացվելի ակտիվները չեն բավականացնի ընկերության պարտավորությունները կատարելու համար : Իրացվելիության ռիսկի կառավարումը ընթացիկ ժամանակահատվածում կապված է ակտիվների և պասիվների կառավարման արդյունավետ խնդրի լուծման հետ` ստանալ առավելագույն շահույթ, պահպանելով իրացվելիության անհրաժեշտ մակարդակը :

Իրացվելիության ռիսկի կառավարումը ակնկալում է .

- ✓ -կանխիկ հոսքերի վերլուծություն
- ✓ -ակտիվների և պարտավորությունների դասակարգում ըստ պայմանագրային ժամկետների
- ✓ -շուկայի մոնիտորինգ :

Ընկերությունում իրացվելիության կառավարման հիմնական մեթոդ է հանդիսանում ակտիվների կառավարման մեթոդը :

Իրացվելիության առաջնային աղբյուրները Ընկերության դրամարկղն է և հաշվարկային հաշիվներում առկա միջոցները: Իրացվելիության երկրորդային աղբյուրները բարձր իրացվելի եկամտաբեր ակտիվներն են, որոնք կարճ ժամկետում և նվազագույն կորուստների ռիսկով կարելի է փոփոխել կանխիկ դրամական միջոցների : Դրանք ձևավորվում են ՀՀ պետական գանձապետական արժեթղթերից :

Իրացվելիության կառավարման համար կիրառում են նաև իրացվելի ակտիվները վաճառելու մեթոդը, երբ իրացվելիության ցածր մակարդակի դեպքում Ընկերությունը դրամական միջոցներ ստանալու նպատակով վաճառում է ակտիվներ և պարտավորությունների կառավարման մեթոդն է, որը ենթադրում է ֆինանսական շուկայում արտաքին փոխառությունների, վարկերի, ռեպո-համաձայնագրերի միջոցով փոխառու միջոցների ներգրավվում ու ակտիվների և պարտավորությունների միջև անհրաժեշտ հարաբերակցության հաստատում: Իրացվելիության ռիսկը կառավարելու և վերահսկելու նպատակով Ընկերությունը պարբերաբար կատարում է ընթացիկ և ժամկետային իրացվելիության մոնիտորինգ` արտաքին միջավայրի փոփոխության դեպքում իրացվելիության լավագույն իրավիճակին հասնելու համար:

Հաշվետու ժամանակաշրջան						
	մինչև 1ամիս	1-ից մինչև 3 ամիս	3-ից մինչև 6 ամիս	6-ից մինչև 1 տարի	1 տարուց ավել	Ընդամենը
Ակտիվներ						
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում						0.00

Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	11,108.00					11,108.00
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ					342,074.00	342,074.00
Հաճախորդների նկատմամբ պահանջներ						0.00
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ					2,580,187.00	2,580,187.00
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ					4,742,738.00	4,742,738.00
Այլ	36,086.00					36,086.00
Ընդամենը ակտիվներ	47,194.00	0.00	0.00	0.00	7,664,999.00	7,712,193.00
Պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	6,585,475.00					6,585,475.00
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	342,074.00					342,074.00
Այլ պարտավորություններ	4,138.00					4,138.00
Ընդամենը պարտավորություններ	6,931,687.00	0.00	0.00	0.00	0.00	6,931,687.00

Նախորդ ժամանակաշրջան						
	մինչև 1ամիս	1-ից մինչև 3 ամիս	3-ից մինչև 6 ամիս	6-ից մինչև 1 տարի	1 տարուց ավել	Ընդամենը
Ակտիվներ						
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում						
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	6,044.00					6,044.00
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	1,358,845.00					1,358,845.00
Հաճախորդների նկատմամբ պահանջներ					2,328,601.00	2,328,601.00
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ						0.00
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ					4,853,117.00	4,853,117.00
Այլ	53,627.00					53,627.00
Ընդամենը ակտիվներ	1,418,516.00	0.00	0.00	0.00	7,181,718.00	8,600,234.00
Պարտավորություններ						

Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	5,754,041.00					5,754,041.00
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	2,023,905.00					2,023,905.00
Այլ պարտավորություններ	13,430.00					13,430.00
Ընդամենը պարտավորություններ	7,791,376.00	0.00	0.00	0.00	0.00	7,791,376.00

Ծանոթագրություն 38. «Կապիտալ և կապիտալի համարժեքություն»

ԱՄԻՍՆԵՐ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱԳԻՏԱԿ	ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱԳԻՏԱԿ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱԳԻՏԱԿԻ ՆՈՐՄԱՏԻՎԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՓԸ	ԿԱՆՈՆԱԳՐԱԿԱՆ ԿԱԳԻՏԱԿ	Համարժեքային նորմատիվի մեծություն
ՀՈՒՆՎԱՐ	804,089,000.00	803,814,000.00	300,000,000.00	350,000,000.00	19.04
ՓԵՏՐՎԱՐ	791,393,000.00	790,713,000.00	300,000,000.00	350,000,000.00	18.80
ՄԱՐՏ	777,510,000.00	775,725,000.00	300,000,000.00	350,000,000.00	18.67
ԱՊՐԻԼ	769,529,000.00	768,632,000.00	300,000,000.00	350,000,000.00	18.66
ՄԱՅԻՍ	760,623,000.00	757,166,000.00	300,000,000.00	350,000,000.00	18.27
ՀՈՒՆԻՍ	758,432,000.00	745,734,000.00	300,000,000.00	350,000,000.00	20.58
ՀՈՒԼԻՍ	759,099,000.00	731,201,000.00	300,000,000.00	350,000,000.00	19.99
ՕԳՈՍՏՈՍ	775,183,000.00	715,204,000.00	300,000,000.00	350,000,000.00	21.70
ՍԵՊՏԵՄԲԵՐ	780,286,000.00	698,171,000.00	300,000,000.00	350,000,000.00	19.81
ՀՈԿՏԵՄԲԵՐ					
ՆՈՅԵՄԲԵՐ					
ԴԵԿՏԵՄԲԵՐ					

Ծանոթագրություն 39. «Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեք»

Ընկերության գնահատմամբ իր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները էականորեն չեն տարբերվում իրենց հաշվեկշռային արժեքներից :

Ֆինանսական գործիքների իրական արժեքը հիմնված է հաշվետու ամսաթվի դրությամբ նրանց շուկայական գնանշման վրա, առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները: Եթե շուկայական գնանշումը հասանելի չէ, գործիքի իրական արժեքը չափվում է կիրառելով գնորոշման մոդելներ կամ գեղջված դրամական հոսքերի տեխնիկան:

Երբ կիրառվում է գեղջված դրամական հոսքերի տեխնիկան, գնահատված ապագա դրամական հոսքերը հիմնված են ղեկավարության լավագույն գնահատականների հիման վրա և գեղջման դրույքը նմանատիպ պայմաններով գործիքի տոկոսադրույքն է հաշվետու ամսաթվի դրությամբ: Երբ գնորոշման մոդելներն են կիրառվում, ներմուծվող փոփոխականները հիմնված են հաշվետու ամսաթվի դրությամբ շուկայական համապատասխան փոփոխականների վրա:

Ընկերության կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների. Շահույթի կամ վնասի միջոցով չափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ:

Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Ընկերության ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա, հաշվի առնելով ձեռքբերման նպատակները: Ակտիվների հետագա վերադասակարգումը կատարվում է անհրաժեշտության հնարավորության դեպքում՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո:

Ֆիքսված մարման ժամկետով արժեթղթերը դասակարգվում են որպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ, երբ Ընկերությունը հաստատապես մտադրված է և հնարավորություն ունի պահել այդ ներդրումները մինչև դրանց մարման ժամկետի լրանալը :

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները պարտքային, ինչպես նաև կապիտալի գործիքներում կատարված այն ներդրումներն են, որոնք Ընկերությունը մտադիր է պահել անորոշ ժամկետով և որոնք կարող են վաճառվել իրացվելիության կարիքների բավարարման համար, ինչպես նաև տոկոսադրույքներում, փոխարժեքներում կամ գներում փոփոխությունների դեպքում: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները նախնական ճանաչումից հետո հաշվառվում են իրական արժեքով:

Ակտիվ ֆինանսական շուկաներում գործող ֆինանսական ակտիվի իրական արժեքը հաշվետու ամսաթվին բորսայի փակման պահին այդ ակտիվի գծով գնանշվող գինն է : Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, ապա գործիքի իրական արժեքը հաշվառվում է ինքնարժեքով:

Ծանոթագրություն 40. «Կանխատեսվող ապագա գործարքների հեջավորում»

Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանում չունի այնպիսի ֆինանսական գործիք, որը հաշվառվում է որպես կանխատեսված ապագա գործարքների հետ կապված հեջ:

Ծանոթագրություն 41. «Ապաճանաչում»

Ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է, երբ վերանում է ակտիվի իրավունքի պահանջը: Ընկերության հաշվեկշռում ապաճանաչված ֆինանսական ակտիվ չի հաշվառվում:

Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է, երբ նա մարվում է, համարվում է չեղյալ կամ դառնում է ժամկետանց: Ընկերության հաշվեկշռում ապաճանաչված ֆինանսական պարտավորություն չի հաշվառվում:

Ծանոթագրություն 42. «Գրավադրված ակտիվներ»

2023թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ չունի գրավադրված ակտիվներ:

Ծանոթագրություն 43. «Ընդունված գրավ»

2023թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ «Ալֆասեքյուրիթիզ» ՍՊԸ-ն չունի ընդունված գրավ 0,00 ՀՀ դրամ անվանական արժեքով ՀՀ պետական պարտատոմսեր համաձայն հակադարձ ռեպո-համաձայնագրի, և 272 200 000 ՀՀ դրամ անվանական արժեքով ՀՀ պետական պարտատոմսեր համաձայն փոխառության համաձայնագրի

Ծանոթագրություն 44. «Պարտավորությունների չկատարում/խախտում»

«Ալֆասեքյուրիթիզ» ՍՊԸ-ն 2023թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ հաշվեկշռում չունի հաշվառված այնպիսի պարտավորություններ, որոնց գծով պայմանագրային պարտավորությունները Ընկերության կողմից խախտվել են: Հաշվետու ժամանակաշրջանում ներդրումային ընկերության կողմից որևէ պայմանագրային պարտավորություն չի խախտվել:

Գործադիր տնօրեն	Գ.Գրիգորյան
Գլխավոր հաշվապահ	Ք.Քարամյան

